

Ծ ա խ ք

	Բ.	Կ.	Բ.	Կ.
Ըիլած են տոկոսաբեր թղթեր . . . .	100	—	—	—
Դրամագլւխի համար ։ աբեր թղթեր գնելու վերայ ծախսուած է . . . .	—	—	3840	45
Լրագիրների մէջ դրամագլխի մասին 1891 թուականի հաշիւը տպագրելու համար 24 ր. 48 կ. և հեռագիրների համար Արքունական Դրամա- տան Տփխիսի Պաշտօնատան ուղղուած . . .	—	—	26	73
	100	—	3867	18

Առ 1-ն Յունուարի 1893 ամի առձեռն պատրաստ կայ

Տոկոսաբեր թղթերով . . . .	53'900	—	—	—
Առձեռն դրամով . . . .	—	—	209	19
ցանուարին 1. 800 ր. տոկոսաբեր թղթեր, որոնց համար Արքունական Դրամական Մոսկուայի Գրասենեակը վճարել է հաշուետուութեանս տա- րուայ Դեկտեմբերին 776 ր., մտած են 1893 ամի մուտքի մէջ: 2 Սկզբ- նական գումարը 6'/. րուբլու արժողութեամբ պահուած է Արքունական Դրամատան Տփխիսի բաժանմունքում: Խսկ մնացեալ գումարները Մոսկուա- յի նահանգական Գանձարանում: Արքեպիսկոպոս Զալալեանցի դրամա- գլուխը 1883 թուից յետոյ պիտի շահեցնուի 125 տարուան ընթացքում: մինչև 12 միլոն րուբլու չափ գումարի համելլը, խսկ այնուհետև կը յատ- կանայ ուսումնարանների կառուցման գործին և թոշակներ սահմանելու զոհարերողին:				

ԹԻՖԼԻՉՈՒ «ՄԵՏԵԽ» ԲԱՆՏԻ Ա. «ՎԱՐԴԱՆ» ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՒ ՆՈՐԱ ՕՇՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԾ:

Կովկասի և Անդր Կովկասի քաղաքների մէջ գտնուած բանտերը զուրկ  
են հայ բանտարկելոց համար աղօթատուն անգամ ունենալուց: միայն  
Թիֆլիզն է, որ 40 տարուց ի վեր «Թիֆլիզի նահանգի կենդրոնական»  
կոչուած բանտումն մի փոքրիկ, թէե անշուք, եկեղեցի է պահում: և  
ահա սյժմ մի լաւ եկեղեցի ևս ունեցաւ Մետեխ անուանուած բանտումն:  
Մետեխն առհասարակ մեր հայերիս համար պատմական մի ուշագրաւ տե-  
ղի է դարձած, որովհետև այնտեղ է նահատակուել մեր ս. Վարդանի

Ըուշանիկ գուստըն, այնտեղ է ամփոփուած և՝ նորա մարմինը, այնտեղ է կառուցած Վրաց ձեռամբ մի ահազին սրբատաշ եկեղեցի: Ըուշանիկի գերեզման տեսնողն յակամայից մտօք ոլանումէ դեպի այն դարն, երբ սա և իւր հայր Վարդանն գործել են. դստեր հաւատոյ գերբնական ոյժը ի նկատի առնելով, մարդ հրճուանօք յիշումէ հօր և մօր գովելի կրօնական ջերմեռանգութիւնը, տոգորուած ազդային բարձր գաղափարներով: Մարդ համբուրելով ս. Ըուշանիկի գերեզմանը, յակամայից և՛ ցանկանումէ հօր անմոռանալի յիշատակը տեսնել. բայց ի՞նչպէս. ո՞ւր է թաղուած հայրն. ո՞ւր են հանգստանում մեր կրօնի և ազգութեան Վեհ պաշտպանի ս. ոսկերքն. մեզ անյայտէ. միայն այդ ցանկութեանը մասամբ կարելի էր գոհացումն տալ, եթէ գրօշմուէր մեր նորակառոյց եկեղեցւոյ անունն յանուն ս. Վարդանայ զօրափարի: Այդպէս և՛ եղաւ. գեղեցիկ զուգատիպութիւն թէ կրօնական և թէ ազգային հայեցակետից նա-յելով:

Մետեխի բանտում հայ բանտարկելոց համար առանձին եկեղեցի ունենալը սկզբունքով որոշուեցաւ 1889 թ., երբ յիշեալ բանտի արևելեան ընդարձակ մասը հիմքից նորոգւումէր: Բանտային յանձնաժողովը (Տյօրեմնական Կոմիտե) մասնակցութեամբ Թիֆլիզի նախկին Առաջնորդ Գեր. Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի՝ որոշեց մի յարմարաւոր տեղ եկեղեցի կառուցանել. որի գլուխ բերելը և նուիրատութիւններ ժողովելը յանձնուեց Թիֆլիզի տոհմական պատուաւոր քաղաքացի պ. Նիկողայոս Սպրիդոնեան Փրիգոնեանցին: աջակցութեամբ երկու բանտերի հայ բանտարկելոց համար յատկապէս ձեռնադրուած Գրիգորիս քահանայ Մատինեանի, որի արիաջան աշխատութիւնն Կայսերական պարգևարաշխութեան է արժանացել և հայ հասարակութեան յարդանքը վաստակել: Անցեալ տարուայ Մարտի 10-ից սկսելով Կառավարութիւնից ստացած ժամանելիքնեալ մատեանով հայ հասարակութիւնից կամաւոր նուէրները ժողովել դոքա կարողացան: բանտային յանձնաժողովի աշալուրջ հոկողութեամբ, յընթացս մի տարուայ եկեղեցւոյ ներսի բարեզարդութիւնները բոլորովին աւարտել, Եկեղեցին պատրաստ լինելով, ներկայ տարւոյս Փետրուարի 14-ին, Տեառնըդառաջի տօնին տեղի ունեցաւ նորա օծումն: որի համար յատկապէս և Էջմիածնի ս. Սիւնհոգոսի հրամանագրութեամբ Թիֆլիս էր ժամանել Պանձակի յաջորդ բարեշնորհ Պօղոս վարդապետ Տէր-Մարգարեանը: Օծման նախընթաց օրը, շաբաթ երեկոյ, ժամի 3-ին Թիֆլիզի հայ հոգևորականները փառաւոր հանդէսով նորակառոյց եկեղեցուն մօտիկ գտնուած Զորաբաշի ս. Գէորգ եկեղեցուց տարան սրբալոյս Միւռոնը, որին հետեւումէր ժողովրդեան խուռն բաղմութիւնը, Հասնելով նորակառոյց եկեղեցին, հայ հոգևորականները նախ՝ սկսան երգել սրբոց Վարդանանց զօ-

րավաբաց «Նորահրաշ պլակաւոր» հոգեբուխ շարականը, որից յետոյ սկըսուեցաւ երեկոյեան ժամերգութիւնը և նախատօնակ նաւակատեաց սուրբ եկեղեցւոյ։ Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, գիշեր ժամանակ, կատարուեց «Հսկումն» և առաւտօտեան ժամերգութիւնը մինչև «Լցաք առաւտու» մաղթանքը։ Հեակեալ օրը, կիւրակի առաւտօտ, ժամի 10-ին սկըսուեցաւ նախ՝ ինն տէրունական պատկերների օծումն և ապա եկեղեցւոյ օծման կարգը, որպիսին հմուտ և անթերի կերպով կատարեց ալեզարդ բարեշնորհ։ Պօղոս վարդապետն—ներկայութեամբ խուռն բազմութեան։ Ա. օծման հանդիսին ներկայ էին և՝ Թիֆլիզի նահանգապետ Իշխան Շերվաշիդձեն, Փոխ-նահանգապետը, քաղաքագլուխ Իշխան և Երկայնարազուկ—Արդութեանն, Թիֆլիզի Աստիկանապետն, այլ և՝ «Բանտային յանձնաժողովի» հայ և՝ օտարազգի պատուաւոր անդամները, Եկեղեցւոյ օծումն վերջացնելուց յետոյ բարեշնորհ։ Պօղոս վարդապետը բանտի ընդարձակ սրահիումը գոհացողական մաղթանք կատարեց նորին Կայսերական Մեծութեան և Գերդաստանի կենաց համար, և, օրհնելով Իշխան նահանգապետին և «յանձնաժողովի» անդամոց, վերագարձաւ եկեղեցին, ուր առաջին սուրբ պատարագը մատոյց, ժամի 2<sup>1/2</sup>-ին սուրբ պատարագի արարողութիւնը վերջացնելով, ժողովուրդը կրօնական ջերմեռանդ տրամադրութեամբ ցրուեցաւ։ Նորակառոյց եկեղեցւոյ օծման պատճառով առաջին և թէ երկրորդ օրը բանտի մուտքը թուլատրուած էր ուխտաւորների համար։ Վերջացնելով մեր տեսած հանդիսի մանրամասն նկարագրութիւնը, վստահանումեմ առաջարկել ում հարկ է, որ սոյն նորակառոյց եկեղեցւոյ տօնը անշուշտ նշանակուի ս. Վարդանանց նահատակութեան տօնի օրն, որպէս միակ համապատասխան օր։

ՊԱՌԱԾ.